Լրագրող. Բարև Ձեզ, ծառահատումների դեմ բողոքի ակցյաներ են անում քաղաքացիները, դուք ինչ եք կարծում՝ ասում են “քաղաքային իշխանությունը սխա՞լ է անում, որ, օրինակ Թումանյանից ութսուն թեղի հատեց”:

Խաչատրյան. Շնորհակալություն, որ ձեր հարցի սկզբում շեշտեցիք քաղաքացիները: Քանի՞ ՀՀ քաղաքացի եք այստեղ տեսնում: Ռուսներն ո՞վ են, որ գան իմ, ձեր, մնացածի քաղաքում որևիցէ բնապահպանական ակցիա անեն: Ես հասկանում եմ, թե որտեղից է փչում քամին: Բայց, անկեղծ ասած, ես մտածում էի, թե չեխական պիտի քամիները լինեն, բայց կարծես չեխականը ռուսաֆիկացված է գալիս, կազմակերպիչների առումով եմ ասում: Պետք է Չեխիայից գային հրահանգները, բայց ռուսաֆիկացված են գալիս: Էստեղ գիտեք ինչ՝ ինչ-որ ռուսներ, բնապահպան կոչվածներ, որոնք պարապ են մեր քաղաքում, և որոշ ավագանու անդամների անձնական տրամադրվածությունն է էստեղ էսպիսի բաներ անել: Այո, ծառերը փոխվում են, փոխվում են շատ ավելի լավ ծառերով: Ես հասկանում եմ նաև այս վայնասունը, էս ռուսների էս տեղ կապած: Դա նրա համար է, որ իրենց երկրի նման փտած ծառերը փոխարինվում են եվրոպական ավելի հաջող ու ստացված ծառերով: Ծառերը փոխարինվում են լավով, մի քանի տարի հետո քաղաքացիները տեսնելու են: Ոչլոտ, հա՞… Ես 8 տարվա ավագանու անդամ եմ, և չի եղել սեզոնային ժամանակահատված, որ Երևանի 90% բակերից, փողոցներից չստանամ բողոքներ, որ մենք ունենք բլոճների, բանի խնդիր: Ու ծառերն ինչքան էլ դեղորայքով պատվում էին, բլոճների դեմը չէր լինում առնել: Մենք ծառերը փոխարինում ենք շատ ավելի լավ, ապագայում շատ ավելի հարուստ քաղաք ունենալու, կանաչ քաղաք ունենալու միտված նախագիծ է սա:

Լրագրող. Տիկին Խաչատրյան, բայց ինչո՞ւ եք դուք այդքան վատ արտահայտվում: Մտահոգ, օրինակ, թեկուզ ՌԴ քաղաքացիներ են, բարձրացնում են խնդիր:

Խաչատրյան. Նորից եմ ասում՝ դուք փորձեք Մոսկվայում, Ռուսաստանում… Իրենք թող գնան իրենց կործանված երկրի փողոցներում որևիցե բան անեն: Իրենք իմ, մեր քաղաքում՝ ՀՀ Երևանի բնակիչների քաղաքում, իրավունք չունեն ակցիաներ անելու՝ իմ համար, համենայն դեպս: Կամ եթե նույնիսկ անեն, ապա մեկը ես՝ ինձ միևնույն է իրենց բարձրացրած որևիցե հարց: Նորից եմ ասում՝ թող իրենք գնան իրենց երկրում նման բան անեն: Բայց ասում եմ՝ այս ակցիայի կենտրոնացված մասը… հիմա չկա հա… ավագանու անդամ կար, որ եկավ, ավագանու հրահանգները տվեց, գնաց ներս: Նորից եմ ասում՝ չեխականը փոխվել ա ռուսականով:

Լրագրող. Ես հասկանում եմ՝ Հայկ Մարությանին եք ակնարկում: Լավ, եթե նույնիսկ ռուսներին չեք ուզում լսել, լսեք օրինակ…

Խաչատրյան. Էստեղ ակցիայի նպատակը, էս 2-3 տարիների ընթացքում անընդհատ ավագանու նիստերին բարձրացվող այս խնդիրների նպատակը մեկն է՝ անձնավորված խնդիր ունի կոնկրետ ավագանու անդամ կոնկրետ մարդու հանդեպ, և ինքը ընդամենը, նորից եմ ասում, չեխական պատվերով ռուսաֆիկացված ակցիաներ է կազմակերպում: Էստեղ աղերս չունի բնապահպանության հետ, աղերս չունի ոչ մի ուրիշ բանի հետ: Երևանի, ՀՀ քաղաքացիները, համենայն դեպս, էս պահին ովքեր էստեղ հավաքված են, ես ձեզ վստահեցնում եմ՝ հիմա իմ աշխատասենյակում ավելի շատ մարդ կա, քան էստեղ հավաքված ակցիայի մասնակիցները: Շնորհակալ եմ: Հետևաբար, նորից եմ ասում, այս երկիրը ներկայացնող քաղաքացիներին ես ասելու բան չունեմ: Լավ ենք անում, ինչ անում ենք՝ լավ ենք անում:

Լրագրող. Հայեր կան, հայերին է՞լ ասելիք չունեք:

Խաչատրյան. Հայերի ասելիքը ասած ա: Նորից եմ ասում՝ եթե էն խնդիրը, որ մենք անում ենք, էն խնդիրները, որը մենք լուծում ենք…

Լրագրող. Բայց, օրինակ, ծառերի հետ կապված ի՞նչ խնդիր եք լուծել, տիկին Խաչատրյան:

Խաչատրյան. Հին ծառերը փոխարինվում են շատ ավելի թանկ, շատ ավելի լավ, շատ ավելի ապագայում կանաչ Երևանը ունենալուն միտված…

Լրագրող. Որ խնդրեմ, նկարներ ցույց կտա՞ք հիմա: Օրինակ՝ մենք հիմա Կանաչ Երևան չենք տեսնում:

Խաչատրյան. Կտեսնեք, որովհետև ամեն ինչ նոր ա արվում: Այո, չեք տեսնում, 30-40 տարի ռուսական փտած ծառերով ենք ապրել, հետևաբար մենք հիմա շատ ավելի առաջադեմ երկրներից ենք…

Լրագրող. Եթե Ռուսաստանից է եկել, ուրեմն փտա՞ծ են:

Խաչատրյան. Փաստացի ռուսական ամեն ինչն է փտած՝ իրենց պես: Շնորհակալություն: